

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**18 փետրվարի 2020թ.
ք.Երևան**

N 13-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԻՆԳ ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ
ՎԱՀԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ
«ԱՅՈ» ԵՎ «ՈՉ» ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և 18-րդ հոդվածի 9-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի «Այո» և «Ոչ» քարոզչության կողմերի (այսուհետ՝ քարոզչության կողմեր) օգտագործման համար վահանակները տնօրինող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից տրամադրված վահանակների ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Եթե կազմակերպությունների կողմից ներկայացված ցանկում առկա են վահանակներ, որոնք հանդիսանում են լուսադիոդային էկրան (ԼԵԴ), սակայն հայտում նշված չլինելու պատճառով այդ մասին տեղեկությունը հայտնի չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ապա նշված վահանակները սույն որոշմամբ տրամադրվում են քարոզչության կողմերին՝ հավասար հնարավորությունների ապահովմամբ, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված այլ կանոնների պահպանմամբ, եթե անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանք վիճակահանությամբ բաշխել է քարոզչության կողմերի միջև:

2 Վահանակները խմբավորել ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի և յուրաքանչյուր խմբում ներառել տվյալ մարզի (Երևան քաղաքի) տարածքում գտնվող վահանակները, վահանակների կողմերը:

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետով նկարագրված խմբերը՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Սույն որոշման N 1 հավելվածով ստացված յուրաքանչյուր խմբում քարոզչության կողմերի միջև իրականացնել վահանակների կողմերի բաշխում այնպես, որ յուրաքանչյուր մարզում (Երևան քաղաքում) քարոզչության կողմից մեկի ստացած վահանակների կողմերի քանակն ավելի քան մեկով պակաս կամ ավելի չլինի մյուս քարոզչության կողմի ստացած վահանակների կողմերի քանակից:

5. Հաստատել սույն որոշման 4-րդ կետով իրականացված բաշխման արդյունքը՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Վահանակները տնօրինող կազմակերպությունները սույն որոշման N 2 հավելվածին համապատասխան պարտավոր են սահմանված կարգով կնքել պայմանագրեր:

7. Քարոզչության կողմերը սույն որոշման N 2 հավելվածին համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո պարտավոր են եռօրյա ժամկետում տեղեկացնել վահանակները տնօրինող կազմակերպություններին սահմանված կարգով պայմանագրեր կնքելու կամ վահանակներից հրաժարվելու մասին:

Եթե սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում, քարոզչության կողմը պայմանագիր կնքելու ցանկություն չի հայտնում, ապա գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու համար:

8. Սույն որոշման 7-րդ կետում սահմանված ժամկետներում քարոզչության կողմերը կարող են միմյանց միջև փոխանակել հավասար թվով վահանակներ և տեղեկացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և համապատասխան վահանակները տնօրինող կազմակերպությանը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

S. Մուկուչյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020թ. փետրվարի 18-ի N 13-Ա որոշման

**Վահանակների խմբերը, վահանակների և վահանակների կողմերի քանակը՝
 ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի**

Խումբ	Վահանակների քանակ	Կողմերի քանակ
Երևան	269	436
Արագածոտն	18	33
Արարատ	37	73
Արմավիր	20	38
Գեղարքունիք	25	48
Լոռի	35	61
Կոտայք	100	176
Շիրակ	61	112
Սյունիք	19	35
Վայոց Ձոր	24	42
Տավուշ	13	25
	621	1079